

կը կանչէր մենամարտողները իրենց անուամբը . ասոնք փառաւոր զարդարուած ձիեր հեծնելով՝ դէպ 'ի կռուոյն տեղը կ'երթային , և դիմացնէն դրօշակ մը կը քալէր , որուն վրայ քաշուած էր Վրխստոսի խաչելութիւնը , սուրբ Մատուածածնայ կամ այն սրբոյն պատկերքը , որուն որ մասնաւոր ջերմեռանդութիւն ունեցած էին : Վատաւորին դիմաց որ կ'ելլէին , չարախօսը կը կըրկներ իրեն ամբաստանութիւնը , ու միւսը կը պաշտպանէր ինքըզինքը . և ետքը երկուքն ալ Մատարանին վրայ երդուրնալով որ ըսածնին ճշմարիտ է՝ մոռնետիկներուն ցուցուցած տեղերը կը կենային ու անհամբերութեամբ կը սպասէին : (Ըմբուկին ձայնը լսուելուն պէս՝ մէկէն սանձարձակ իրարու վրայ կը յարձակէին , և մէկմէկու նիզակները ջախջախելով՝ սուրերը ձեռք կ'առնէին . ետքը իրարու աւելի մօտենալով՝ դաշտններով կը կռուէին . և ինչուան երկուքէն մէկը մեռած գետին չիյնար կամ զինքը յաղթուած չխոստովանէր , մենամարտութիւնը չէր լմնար : (Ը)է որ գլխապարտութեան յանցանքի մը համար էր մենամարտութիւնը , բոլոր նախատինքը յաղթուողին վրայ կ'երթար՝ թէ ամբաստանեալ ըլլար և թէ ամբաստանող : (Ս)ունետիկները կը մերկացնէին զանիկայ իրեն զէնքերէն , և զանոնք ջարդուբուրդ ընելով՝ ասդիս անդին կը նետէին , և յաղթուողը դատաւորներուն ձեռքը կը յանձնէին , որոնք կրակի մէջ ձգել կու տային զանիկայ կամ կը կախէին , և կամ թէ ձեռուրները , կամ ականջները , կամ քիթը կտրել կու տային : Վաղաքականութիւնը առաջ երթալով , և իշխաններու ու յիւսիսեցւոյ արգելքներն ալ միանալով՝ այս բարբարոսական դատաստաններուն վրայ փոփոխութիւններ եղան . բայց դարձեալ ասով խտրի մէջ չդադրեցաւ մենամարտութեց ախորժը , որովհետեւ անձնական պատուոյ դէմ եղած նախատինքները կը գրգռէին զանիկայ . անոր համար խտաւրացւոյ մէջ ով որ զէնք շարժելու կըր-

թութիւն ունէր՝ որ և իցէ կըքի , կամ քաղաքագիտական և կրօնական կարծեաց համար մենամարտութեամբ վրէժը կ'ուզէր առնել :

Ինչուան հիմա ըսած խօսքերնէս կ'իմացուի , որ մենամարտութիւնները ըստ ժամանակին կ'աւելնային կամ կը պակսէին . թէպէտ և յիւսիսեցւոյ ջանքը միշտ նոյն եղած է : Սակայն ասպետութիւնը , որ այնչափ դարերու միջոց պատուոյ մէջ մնաց , վերջապէս այն ալ կորսնցուց իր երեւակայեալ մեծութիւնը , իր օրէնքները ջնջուեցան ու իր սովորութիւնները վերցուեցան : Հենրիկոս Բ պատերազմական խաղի մէջ (Ս)ոնկոմերիի դքսէն վիրաւորուելով՝ մեռաւ . անկէց ետքը մէկէն այդ պատերազմական խաղերը արգիւրուեցան . և նոյնպէս ուրիշ տեղեր ալ այն ժամանակները սաստիկ օրինադրութիւններ ելան . ասով քիչ ատենէն հասարակաց մենամարտութիւնները դադրեցան : Ինկէց ետքը առանձնական մենամարտութիւնները սկսան , որ ինչուան հիմա ալ կը տեսնեն , մանաւանդ զինուորականաց մէջ , թէպէտ և երթալով քիչնալու վրայ են . սակայն քանի որ մարդկանց մէջ շատերը իրենց պատիւը անանկ գերազանց բան սեպած են , որ անոր դէմ եղած մէկ ոչինչ նախատինքը՝ աններելի յանցանք կը համարին , մենամարտութիւնը ոչ երբէք պիտի դադրի աշխարհքիս վրայէն :

Տեղւոյն յորժուր գովեստ :

Լուգովիկոս Ժ.Պ. Պուալոն իրեն պատմագիրը ըրեր էր , որովհետեւ շատ կը սիրէր զանիկայ : Մէկ անգամ մը պատերազմին վտանգաւոր տեղերը մըտած ըլլալով՝ անմիջապէս դիմացը թնդանօթի գնտակ մը ինկաւ . Պուալոյ ասիկայ լսածին պէս՝ մէկէն վազեց իրեն ու ըսաւ . “ Իբրեւ քու պատմագիրդ կ'աղաչեմ զքեզ , տէր իմ , այդպէս չուտով մի լմնցնել տար իմ պատմութիւնս , : — Ուրիշ անգամ մը Լուգովիկոս հարցուց իրեն թէ քանի տարեկան է . պատասխան տուաւ Պուալոյ . “ Տարի մը առաջ ծներ եմ . քեզմէ , որպէս զի քու թագաւորութեանդ հրաշալիքները հռչակեմ , : ”